



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԸ ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանում այսօր նշում ենք երկրի մայր օրենքի՝ ՀՀ Սահմանադրության օրը:

Շնորհավորում եմ բոլորիս այս կարևորագույն օրվա առթիվ:

25 տարի առաջ այս օրը համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Սահմանադրությունը, որն ամրագրեց Հայաստանի Հանրապետության բնույթը, հռչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները և սահմանեց հանրապետության կառավարման ձևը:

Մայր օրենքի փաստաթղթի մեջ արտահայտված են սոցիալական, իրավական ու ժողովրդավարական պետություն կերտելու մեր հիմնական նպատակակետերը:

Դրանք կյանքի կոչելու ճանապարհին դեռ շատ անելիքներ ունենք:

Եւ այսօր, աներկբա է, ՀՀ իշխանություններն ունեն բավարար քաղաքական կամք, իսկ ՀՀ քաղաքացին ունի բարձր գիտակցում՝ իրենց քայլերով ու հետևողականությամբ կյանքի կոչել մեր երկրի լիարժեք ժողովրդավարացումը և կառուցել բոլորիս երազանքների՝ Օրենքի ու Իրավունքի գերակայության պետությունը:

Կեցցե՛ ազատ ու անկախ Հայաստանը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ